Հեռազոտական Աշխատանք

Դպրոց՝ Զովասարի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Խոսքային հաղորդակցում

Կատարող՝ Հեղինե Խաչատրյան

Թալին 2023

Բովանդակություն

Ներածություն.....էջ2

«Խոսքային հաղորդակցություն» .....էջ 4

«Խոսք և հաղորդակցություն» ժամերը մայրենիի դասերին.....էջ 6

Եզրակացություն.....էջ 16

Օգտագործված գրականության ցանկ.....էջ 17

Ներածություն

Կրթական համակարգում խիստ կարևորվում է սովորողների ակտիվ ճանաչողական, խոսք և հաղորդակցում վարելու կարողության ձևավորումը: Այս է պատճառը, որ ներկայումս բավականին արդիական է կրտսեր դպրոցականների խոսքի և հաղորդակցման գործունեությանը նպաստող մտավոր կարողությունների զարգացմանը միտված հնարների որոնման խնդիրը: Տարրական դպրոցում են ձևավորվում երեխայի անձի բազմաթիվ որակները, այդ թվում՝ նրա հաղորդակցումը: Այս կարողության ձևավորման միջոցներից են խոսքը և հաղորդակցումը: Արդի ուսուցման հիմնական նպատակն է ոչ միայն հաղորդել որոշակի գիտելիքներ, այլև ձևավորել անհրաժեշտ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և այն կիրառելու կարողություններ: Եթե վաղ տարիքում երեխայի հաղորդակցական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ խոսքի և հաղորդակցման գործունեության մեջ: Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կապակցված խոսքի կառուցումը նպաստում է կրտսեր դպրոցականի խոսքին և հաղորդակցմանը, մտքի թռիչքին, որն էլ իր հերթին հետագայում կրտսեր դպրոցականի մոտ վերածվում է կարողության: Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքներն ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը: Հայտնի է, որ բանավոր խոսքը հաղորդակցման հիմնական միջոցներից մեկն է: Իր մտքերը, ապրումները և ցանկությունները համարժեքորեն վերարտադրելու համար երեխան պետք է տիրապետի խոսքի զարգացման հմտություններին, քերականական կառուցվածքին, կապակցված խոսքին, հնչարտասանական առանձնահատկություններին, հնչերանգի օգտագործման կուլտուրային: Նա պետք է ունենա հարուստ և ակտիվ բառապաշար: Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հմտությունների, կարդալու կարողությունների զարգացումն է: Կրտսեր դպրոցականի խոսքը զգայուն է: Խոսքը մարդկային հասարակության մեջ հաղորդակցման կարևորագույն գործոն է և ինքնահաստատման սեփական եսը դրսևորելու, մտածողության, աշխարհընկալման կարողությունների զարգացման ամենաանհրաժեշտ միջոցը: Այդ է պատճառը, որ տարրական դասարաններում մայրենիին հատկացված ժամաքանակից, իբրև անհրաժեշտ բաղադրիչ, շաբաթական ժամերից մեկը հատկացնել աշակերտների խոսքային կարողությունների

զարգացման խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով «Խոսք և հաղորդակցություն»: Տարրական կրթությունը հանրակրթության հիմքն է: Այս փուլում ուսուցման առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից՝ սովորողների տարիքային առանձնահատկություններով, մյուսից կողմից՝ կրթական համակարգի սկզբնական փուլի պայմաններով: Այս փուլում է տեղի ունենում ուսումնական հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորումը, ինքնագիտակցության զարգացումը:

Խոսքային հաղորդակցություն

Բոլոր ժամանակներում էլ խոսքը զորավոր ազդեցություն է ունեցել անհատների և հանրության վրա: Ցանկացած կիրթ մարդ, մտավորական և հատկապես ուսուցիչ պարտավոր է բարձր մակարդակով տիրապետել մայրենի լեզվին, քանի որ հենց ինքն է հասարակությանն առաջ մղողը, նրան վեհ գաղափարներով զինողն ու դաստիարակողը: Ուսուցիչն, ընդունելով իրեն վստահված ամենահզոր զենքը՝ լեզուն, պետք է կարողանա զգուշությամբ և վարպետորեն կիրառել այն՝ անընդհատ կատարելագործելով իր մասնագիտական կարողությունները՝ կիրթ , գեղեցիկ և հետաքրքիր խոսք կառուցելու համար: Անառարկելի փաստ է, որ աշակերտին ոգևորող լավագույն օրինակը ուսուցչի խոսքն է, ուստի ուսուցիչը պետք է խորությամբ զգա և ընկալի լեզվի յուրաքանչյուր հնչյուն, բառ, արտահայտություն՝ վերջիններից իմաստային բոլոր դրսևորումներով, այսինքն՝ ունենա լեզվազգացողության բարձր մակարդակ: Ուսուցիչը պետք է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրի դասավանդվող նյութը , որպեսզի աշակերտների բանավոր խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման աշխատանքներն իրականացնի ճիշտ մեթոդաբանությամբ: Ուսուցչի լեզվամտածողության զարգացմանը մեծապես նպաստում են հարտասանական գիտելիքներն ու դրանք գործնականում կիրառելու կարողությունը: Ուսուցչի խոսքը պետք է լինի հարուստ և բազմազան, ճշգրիտ և հստակ, պարզ և մատչելի, սեղմ և տրամաբանական, արտահայտիչ, պատկերավորման

արտահայտչական միջոցների կիրառմամբ: Ուսուցչի արտահայտիչ պատկերավոր խոսքն անհամեմատ ազդեցիկ է, ուժեղ. այն հարստացնում է խոսքի բովանդակությունը , զորացնում է արդյունավետությունը: Ոչ միայն ազդում է աշակերտի մտքի վրա , այլև արթնացնում է նորանոր զգացումներ, վառում է երևակայությունը: Դրանով նա իր խոսքը դասարանի համար դարձնում է ավելի հետաքրքիր , իսկ հաղորդվող միտքն ավելի ընկալելի:

Խոսք՝ հին բերականության մեջ նաև՝ բան: Ի տարբերություն լեզվի, որը խոսողական ունակությունների ընդհանրական համակարգ է տվյալ լեզվով խոսող հանրության յուրաքանչյուր անդամի գիտակցության մեջ, խոսքը այդ համակարգի կոնկրետ, անհատական իրացումն է, լեզվի կենդանի գոյը, որ դրսևորվում է խոսքային գործունեության միջոցով, խոսողական ակտերով (ռուս.՝ речевые акты): Խոսքը կառուցվում է լեզվական համակարգի թելադրանքով. այն լեզվի հետ միասնության մեջ է: Խոսքը բնորոշ է նրանով, որ այն նյութական կողմ ունի, ընկալելի է զգայարաններով (լսողությամբ, տեսողությամբ, շոշափելիքով) , իրականության հետ համապատասխանության տեսանկյունից կարող է լինել ճիշտ կամ սխալ, կեղծ: Այն անկրկնելի է, իրացվում է կապված հաղորդման որոշակի նպատակների հետ, հարմարեցվում է իրադրության հետ (խոսքային իրադրություն (ռուս.՝ речевая ситуация)), ծավալվում է ժամանակի ու տարածության մեջ (խոսքային շղթա (ռուս.՝ речевая цепь)), դինամիկ է. արտադրողականությամբ սահմանափակ չէ, իրացվում է որոշակի անհատի կողմից, պայմանավորված է անհատի ստեղծագործական ակտիվությամբ և նպատակադրումներով:Դեռևս հազարավոր տարիներ առաջ՝ նախապատմական շրջանում, մարդիկ աստիճանաբար տիրապետել են հաղորդակցության հիմնական տեսակներից մեկին՝ բանավոր խոսքին: Մինչև գրերի գյուտը տեղեկությունները պահպանվում էին միայն հիշողությամբ և պատկերների միջոցով: Մոտավորապես 3500 տարի առաջ Միջագետքի (այժմյան Իրաքի տարածքում) բնակիչները՝ շումերները, հայտնագործեցին գրերի առաջին համակարգը: Նրանք մտքերն իրար հաղորդում էին պատկերներով, որոնք շուտով փոխարինվեցին նշաններով. տեքստերը գրառում էին կավի փոքրիկ սալիկների վրա՝ հնդկեղեգի հատուկ ձողիկով: Հին եգիպտացիներն օգտվում էին գրության մեկ այլ տեսակից՝ գաղափարագրերից (հիերոգլիֆ), որոնք որոշակի հասկացություններ արտահայտող պատկերագրերի շարքեր էին:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերը մայրենիի դասերին

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը: Մայրենի լեզուն ուղղված է՝ · սովորողի ինքնաարտահայտմանը, ինքնադրսևորմանը.

· սեփական միտքը բանավոր և գրավոր ձևակերպելուն և արտահայտելուն.

· սովորողի ստեղծագործական մտքի զարգացմանը: Մայրենի լեզվի ուսուցման խնդիրները՝

· սովորողի ինքնարտահայտման պահանջմունքի պահպանում ու զարգացում.

· լեզվամտածողության, լեզվազգացողության զարգացում.

· բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ խոսքի, հստակ արտահայտման կարողությունների զարգացում.

· բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու հմտության զարգացում.

· ստեղծագործական մտածողության, երևակայության զարգացում.

· վերլուծելու, համադրելու, հակադրելու հմտությունների զարգացում.

· լեզվական տարբերակներ գիտելիքների յուրացում: Մայրենի լեզվի ուսուցումը պետք է սովորողին հնարավորություն տա՝

· անկաշկանդ և գրագետ, գրավոր և բանավոր արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները.

· կառուցել ճիշտ և փաստարկված խոսք.

· զարգացնել լեզվական-ստեղծագործական երևակայությունը:Մայրենի լեզվի ուսուցման կազմակերպումը՝

· ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով սովորողի առօրյայի, ամենօրյա գործունեության հետ: Մայրենի լեզուն, որպես հիմնական լեզու, անընդհատ է և ամենուր: Այն առկա է գործունեության բոլոր ձևերում: Ուսումնական միջավայրը նպաստում է, որ սովորողն առանց սխալվելու վախի արտահայտի իր մտքերը, կարծիքը, հույզերը:

· Ուսուցումը կազմակերպել թվային գործիքների լիարժեք կիրառմամբ: Թվային գործիքները հնարավորություն են տալիս տեսածը, լսածը, կարդացածը հրապարակելու, քննարկման դնելու /առցանց քննարկում/, ասելիքը տեսանյութով, ձայնագրությամբ, ֆոտոշարքով ներկայացնելու:

· Ստեղծել անընդհատ հաղորդակցության միջավայր: Սովորողի ուսումնական աշխատանքը կազմակերպվում է համացանցում՝ էլեկտրոնային հասցեի, էլեկտրոնային օրացույցի, SkyDrive-ի, մեդիագրադարանի, դասարանական բլոգի, դասարանական կայքէջի միջոցով: Մայրենի լեզվի ուսուցման առաջին կարևոր փուլը՝տառուսուցումը, չի տարանջատվում մայրենի լեզվին առաջադրվող մյուս խնդիրներից, այլ համարվում է գրավոր խոսքի զարգացմանը նպաստող կենդանի ու արդյունավետ մեթոդ: Ուսուցման առաջին տարվա առաջին օրերից սովորողը սկսում է տառեր, բառեր մուտքագրել ու միաժամանակ ընթերցել: Համակարգիչը, էլեկտրոնային գրատախտակը, ուսումնական խաղերը հնարավորություն են տալիս առանց արհեստական ու պայմանական բաժանումների փոխկապակցել գրաճանաչության նախագրային, գրային, ետգրային փուլերը: Երեխան նկարում-պատմում է, միաժամանակ՝ երգում-վանկատում , մուտքագրում-ընթերցում: Երեխան պատմում է այն ամենի մասին, ինչն իրեն հետաքրքիր է, ինչն իրեն հուզում է: Պատմում է իր, ընտանիքի, հարազատների, տան մասին՝ ցուցադրելով նախապես թվային ֆոտոխցիկով արված լուսանկարները, դիտում՝ ընկերոջ ցուցադրած ֆոտոշարքը և տալիս իրեն հետաքրքրող հարցը, ֆոտոշարքից առանձնացնում որոշակի նկարներ, կոնկրետացնում խոսքը, ապա նկարագրում, բնութագրում, բացատրում, մեկնաբանում, հետո անվանում (տեսքից անցում պարբերության, նախադասության, բառակապակցության, բառի, հնչյուն-տառի): Գրական նյութերի (ոտանավորներ, հեքիաթներ, խաղիկներ, հանելուկներ, առած-ասացվածքներ) ուսուցման ժամանակ թվային միջոցների գործածումը նոր մեթոդների կիրառում է ենթադրում:Երեխան լսում ու դիտում է հեքիաթներն ու բանաստեղծությունները (աուդիո-գրքեր, մուլտֆիլմեր), ապա պատմում -ձայնագրվում թվային ձայնագրիչով ու նորից լսում, հետո նկարում՝

վրձնով, ինչպես նաև համակարգչով, բեմադրում-տեսագրվում՝ դառնալով հեքիաթի, ոտանավորի կերպար ու հերոս: Այդպես մեդիան ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ, ժամանակակից ու հետաքրքիր է դարձնում:Ուսուցողական այսպիսի միջավայրում երկրորդ, երրորդ, չորրորդ դասարանցին ավելի համարձակ ու վստահ է արտահայտվում: Ավելանում են բանավոր, ինչպես նաև գրավոր խոսքին ներկայացվող պահանջները: Կազմակերպվում է առկա, հեռահար և առցանց ուսուցում՝ մայրենի լեզուն անընդհատ գործածելու ու զարգացնելու հնարավորություն տալու համար: Անընդհատ ընթերցելու, վերլուծելու, քննարկելու, գրելու, արտահայտվելու, հարցնելու հնարավորություն է տալիս mskh-ը՝ իր թվային գրադարանով, ենթակայքերով, դասարանական կայքէջերով, բլոգներով: Սովորողի վրձնով կամ Paint ծրագրով նկարած նկարը, ֆոտոշարքը, ձայնագրությունն ու տեսաֆիլմը, հորինված պատմությունները պարբերաբար հայտնվում են դպրոցի կայքէջում, բլոգում: Սովորողը գիտի, որ իրեն հետևում են՝ սպասում են իր նոր նկարին կամ պատմությանը, ընթերցած նյութի վերաբերյալ իր կարծիքին, ընկերոջ հորինածի մասին իր մեկնաբանությանը: Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հմտությունների, կարդալու կարողությունների զարգացումն է: Իսկ սովորողը կարդում ու գրում է անընդհատ, բոլոր դասաժամերին: Այստեղ ևս մեկ անգամ ընդգծվում է մայրենիի անընդհատ ուսուցումը. մաթեմատիկայի դասին՝ խնդրի պայմանների վերլուծության, բացատրության, պահանջի ձևակերպման, պատճառաբանության, պատասխանի, բնագիտության դասին՝ փորձի ներկայացման, դիտարկման, արդյունքների գրանցման, ուսումնական ճամփորդության ժամանակ՝ տեսածը պատմելու, ներկայացնելու, հարցադրումներ անելու տեսքով: Ընթերցանության նյութերի ընտրությունն էլ ինքնանպատակ չէ : Կրտսեր դպրոցականի խոսքը զգայուն է: Հայ դասական ստեղծագործությունների ուսուցումը փոխանցում է այնպիսի լեզվական կաղապարներ, որոնք նպաստում են լեզվամտածողության զարգացմանը: Համաշխարհային մանկական գրականությունից ընտրվում են այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է սովորողի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը: Սովորողի կատարած աշխատանքը դպրոցում և տանը՝ Կարդալ սովորում են կարդալով, գրել՝ գրելով: Կարդալ: Կարդալ, դեռ չի նշանակում հասկանալ: Կարևոր է կարդացածը հասկանալ: Իրեն հասկանալի տեքստը հասկանալի ներկայացնել դիմացինին: Կարդալիս առանձնացնել հիմնական ասելիքը, միտքը, գաղափարը: Բառարանի օգնությամբ բացատրել անծանոթ բառն ու դարձվածքը, գտնել հանդիպած բառերի հոմանիշներն ու հականիշները, պատմելիս դրանք փոխարինել համապատասխան բառով կամ արտահայտությամբ: Դասագիրքը չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը. ուսումնական նյութերը անընդհատ թարմացվում-հարմարեցվում են սովորողին: Ուսումնական նյութերի հիմնական շտեմարանը մեդիագրադարանն է, որի բաժանորդն են սովորողն ու ուսուցիչը: Մեդիագրադարանն անընդհատ լրացվում էթվային (այլոց կողմից և տեղում՝ կրթահամալիրի սովորողների, ուսուցիչների կողմից թվայնացված) գրքերով, համացանցային ռեսուրսներով և կրթահամալիրի ուսուցիչների, սովորողների և այլոց ստեղծած

տեսա-աուդիո նյութերով: Ուսումնական նյութեր ընտրելիս և հածնարարելիս ուսուցիչը նկատի է ունենում նաև սովորողի ընդունակությունները և նախասիրությունները: Կարդում են դասական ստեղծագործություն, գիտահանրամատչելի նյութ, լուր, տեղեկություն, խնդիր, առաջադրանք: Գրել: Սովորողը պիտի ցանկանա գրել իրեն ծանոթ, իրեն հարազատ, իրեն մոտ, հետաքրքիր, իրեն առնչվող թեմաների մասին: Երեխան պիտի գրի իր մասին, իր ապրումների, իրեն շրջապատող աշխարհի, մարդկանց ու իրեն հուզող ու հետաքրքրող երևույթների, իրադարձությունների մասին: Նման թեմաների շուրջ երեխաներն անընդհատ կարող են գրել: Կարող են գրել նկարագրական շարադրություններ, պատրաստել տեղեկատվական նյութեր, օրվա մասին պատմել, գրել նամակներ, ինչպես նաև՝ հայտարարություններ ու շնորհավորանքներ: Երեխաների միտքը և երևակայությունն անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքիր ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Հորինած պատմությունը գրելուց հետո երեխան այն ներկայացնում է՝ կարդում, նկարում, պատրաստում իր հեքիաթի էլեկտրոնային նկարազարդ էջը, աուդիո տարբերակը, ներկայացումը /հերոսն էլ ինքն է, իր ընկերները, ընտանիքի անդամները/ հեքիաթի հիման վրա պատրաստած մուլտֆիլմը, որի հերոսներին նույնպես պատրաստել է սեփական ձեռքերով /պատրաստել գունավոր թղթով, կտորով, ձեռնոցով, կավով կամ պլաստիրինով/: Մյուս երեխաները հետաքրքրությամբ լսում են, հարցեր :Երեխաները շատ են սիրում նամակներ գրել ոչ միայն ծանոթ մարդկանց, այլև հեքիաթի հերոսին, կերպարին, ամենաանսպասելի մեկին: Նամակի բովանդակությունն էլ կարող է լինել տարբեր: Նամակներում երեխաները շատ են սիրում խոստովանություններ անել, արտահայտել իրենց հույզերը՝սերը, զարմանքը, բողոքը, պահանջը, խնդրանքը: Նամակները կարող են լինել խորհուրդ տալու կամ հրավիրելու, բարկանալու կամ ոգևորելու համար: Երեխաների երևակայությունը ազատելը և ստեղծագործական միտքը զարգացնելը կրտսեր դպրոցի կարևոր խնդիրներից է: Կարևոր է, երբ կատարած աշխատանքը, գործադրած ջանքերը գնահատվում են: Գնահատականը պիտի ոգևորի սովորողին և առաջ մղի: Կայքում բոլոր սովորողներն ունեն իրենց անձնական կայքէջերը, որտեղ նյութեր թողարկելը հնարավորություն է տալիս բոլորին հայտնվել հավասար պայմաններում: Յուրաքանչյուր սովորող հնարավորություն է ունենում արտահայտվելու, ինչպես նաև կարդալու, կարդացածի վերաբերյալ վերաբերմունք, կարծիք հայտնելու: Երեխաները կարդում են ընկերոջ ստեղծագործությունը, ապա ծավալում առցանց քննարկում, որին մասնակցելու հնարավորություն է ունենում յուրաքանչյուր սովորող : Առաջին դասարանցուն ներկայացվող պահանջներն են՝

· Պատմել իր, ընտանիքի, ընկերների, օրվա և նախասիրությունների մասին.

· Բացատրել, մեկնաբանել ծանոթ բառերի իմաստները.

· Պատմել լսած հեքիաթը, պատմությունը, տեսած ֆիլմը, մուլտֆիլմը.

· Բնութագրել, նկարագրել հերոսներին.

· Վերաբերմունք, կարծիք արտահայտել հեքիաթի, հերոսների, մարդկանց, արարքների վերաբերյալ.

· Պատճառաբանել սեփական կարծիքը.

· Թվարկել պատմության, հեքիաթի դեպքերն ըստ հերթականության.

· Նոր ավարտ մտածել հեքիաթի, պատմության համար կամ փոխել ավարտը.

· Նկարագրել ծանոթ առարկաները, երևույթները.

· Պատասխանել ծանոթ ստեղծագործությանը վերաբերող հարցերին: Կարևորվում է երևակայական, ստեղծագործական մտածողության զարգացումը, որն իր արտացոլումն է գտնում բանավոր և գրավոր աշխատանքներում՝

· Ծանոթ բառերը միացնելով՝ նոր, անսպասելի բառեր ստանալ և բացատրել.

· Փոփոխել ծանոթ հեքիաթները՝ ա) ավելացնել կամ պակասեցնել հերոսներ բ) փոփոխել իրադարձությունները գ) փոփոխել սկիզբը, ավարտը դ) տարբեր հեքիաթների հերոսներով նոր հեքիաթ հորինել

· Հորինել նոր, երևակայական հերոսներ.

· Հորինել հանելուկներ, շուտասելուկներ: Առաջին դասարանն ավարտող սովորողը պիտի կարողանա՝ · Կարդալ և հասկանալ 2-5 նախադասությամբ տեքստ.

· Տեքստում անծանոթ, անհասկանալի բառերը գտնել և ընդգծել.

· Տեքստի վերաբերյալ հարցի իր պատասխանը հիմնավորող բառը, բառակապակցությունը, նախադասությունը գտնել.

· 3-4 նախադասությունից կազմված պատմություն հորինել և գրել (մուտագրել).

· Շնորհավորանքներ և կարճ նամակներ գրել.

· 1-2 նախադասությամբ ավարտել կիսատ թողած միտքը.

· Նախադասությունն սկսել մեծատառով, ավարտել վերջակետով .

· Հատուկ անունները գրել մեծատառով: Երկրորդ դասարանցուն ներկայացվող պահանջները, բնականաբար, ավելանում են: Կարևորվում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում նոր բառերի, արտահայտությունների ներմուծումը, միտքն ավելի գեղեցիկ , պատկերավոր և հասկանալի ներկայացնելու, սեփական կարծիքը հիմնավորելու և պաշտպանելու, դիմացինին լսելու և հարցադրումներ անելու կարողությունների ձևավորումը: Երկրորդ դասարանում բանավոր պատումներից բացի, սովորողը սկսում է պատմել նաև գրավոր՝ Պատմել իր, ընտանիքի, ընկերների, օրվա և նախասիրությունների մասին՝ հաղորդելով կոնկրետ տվյալներ. Մի քանի բառով նկարագրել և բնութագրել իրեն և մյուսներին. Խոսքի մեջ օգտագործել ծանոթ բառերի հոմանիշներն ու հականիշները. Պատմել լսած հեքիաթը, պատմությունը, տեսած ֆիլմը, մուլտֆիլմը՝համապատասխան մեջբերումներ անելով. Բնութագրել, նկարագրել հերոսներին՝ օգտագործելով նոր բառեր, բառակապակցություններ. Պատասխանել ծանոթ ստեղծագործությանը վերաբերող հարցերին, պատասխանը հիմնավորել. Վերաբերմունք, կարծիք արտահայտել հեքիաթի, հերոսների, մարդկանց, արարքների վերաբերյալ. Պաշտպանել սեփական կարծիքը. Հարցադրումներ անել լսածի վերաբերյալ. Տեսածի, լսածի, իր հետ կատարվածի մասին կարծիք հայտնել. Բարդ բառեր կազմել՝միացնելով մի քանի անսպասելի բառեր և բացատրել դրանց իմաստը. Փոփոխել ծանոթ հեքիաթները՝ ա) ավելացնել կամ պակասեցնել հերոսներ բ) փոփոխել իրադարձությունները գ) փոփոխել սկիզբը, ավարտը դ) տարբեր հեքիաթների հերոսներով նոր հեքիաթ հորինել : Հորինել նոր, երևակայական հերոսներ, նկարագրել, բնութագրել նրանց. Փոփոխել ծանոթ առած- ասացվածքները՝ դրանց բաղադրիչները միացնելով իրար. Հորինել հանելուկներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ, պատմություններ. Ստեղծագործաբար մշակել տրված հեքիաթը կամ պատմությունը: Երկրորդ դասարանցին պիտի կարողանա՝ Կարդալ և հասկանալ տեքստը. Տեքստում անծանոթ, անհասկանալի բառերը գտնել, ընդգծել և բացատրել. Տեքստի վերաբերյալ հարցի իր պատասխանը հիմնավորող բառը, բառակապակցությունը, նախադասությունը, միտքը, հատվածը գտնել, ներկայացնել. 3-5 նախադասությամբ տեղեկատվական նյութ պատրաստել այն իրադարձության մասին, որին ինքը մասնակցել է. Նամակներ գրել. Հրավիրատոմսեր պատրաստել. Շնորհավորանքներ գրել. 3-5 նախադասությունից կազմված տեքստ գրել / միտքը ձևակերպել, գրանցել. հորինած պատմությունը, նկարագրական

շարադրությունը/. Նախադասությունն սկսել մեծատառով, ավարտել վերջակետով . Օժանդակ բայերը ճիշտ գրել / ներկա ժամանակ/. Հատուկ անունները գրել մեծատառով. Խոսքի մեջ անընդհատ գործածվող բառերը ճիշտ գրել. Երրորդ դասարանցուն ներկայացվող պահանջներն ավելանում են: Ավելանում է ավելի շատ ինքնուրույն աշխատելու չափաբաժինը, որի ընթացքում սովորողը կատարելով լեզվական հայտնագործություններ՝ ձեռք է բերում լեզվական նոր հմտություններ՝ դառնալով ավելի գրագետ: Դրան մեծապես նպաստում է իր հիմնականում գրավոր (նաև՝ բանավոր) խոսքը խմբագրելուն ու շտկելուն ուղղված աշխատանքները: Երրորդ դասարանցուն ներկայացվող պահանջներն են՝ Ներկայանալ (անուն ազգանուն, հասցե, հեռախոսահամար, բնութագրել իրեն, նկարագրել, ներկայացնել նախասիրությունները...) Նկարագրել իր միջավայրը, մարդկանց, նյութերը. Տեսածի, լսածի, իր հետ կատարվածի վերաբերյալ կարծիք հայտնել. Պատմել բնության երևույթների մասին, դրանք նկարագրել. Բանավոր ներկայացնել կատարած բնագիտական և այլ փորձերը, ինքնուրույն կարճ հարցազրույց վարել անհրաժեշտ թեմայով. Խմբի հետ պատմություն հորինել, շարունակել ընկերների հորինածը. Հորինել և գրել ասելուկներ, հանելուկներ և պատմություններ. Ստեղծագործաբար մշակել տրված հեքիաթը կամ պատմությունը (ոդդարիական հնարքների կիրառում). Կարդալ առաջադրանքը, հասկանալ և կատարել. Կարդալ է 6-7 նախադասությամբ տեքստը և հասկանալ. Գտնել ծանոթ բառերի հոմանիշներն ու հականիշները. Խմբավորել տրված բառերն ըստ հատկանիշների. Կազմել բարդ և ածանցավոր բառեր. 4-5 նախադասությամբ կապակցված խոսք կառուցել. Ելնելով սեփական կենսափորձից՝ դատողություններ անել կարդացածի վերաբերյալ. Ինֆորմացիա հաղորդել հասու բոլոր միջոցներով. Ինֆորմացիա հավաքել և գրանցել. 2-3 նախադասությամբ գրավոր լրատվություն պատրաստել դասարանական, դպրոցական իրադարձության մասին. Շնորհավորական բացիկներ, հրավիրատոմսեր պատրաստել, 3-4 նախադասությունից կազմված (նաև էլեկտրոնային) նամակներ գրել: Երրորդ դասարանի աշակերտը պիտի կարողանա՝ Բանավոր և գրավոր հստակ, հասկանալի արտահայտել մտքերը. Կարդալ (մտքում և բարձրաձայն) և հասկանալ կարդացածը. Գրավոր և բանավոր համառոտել և ընդարձակել կարդացածը. Մեկ-երկու նախադասությամբ բնութագրել ստեղծագործության կերպարներին և պատճառաբանել իր կարծիքը. Գրածը խմբագրելու առաջին փորձերն անել՝ ավելորդ բառերը հանել, շտկել սխալ կազմված անհարթ նախադասությունը:Հասկանալ և գործածել այն բառերը, որոնց իմաստը բացատրված է դասագրքում. Տրված թեմաներով ստեղծագործական և նկարագրական շարադրություններ գրել: Չորրորդ դասարանցուն ներկայացվող պահանջներն ավելանում են: Չորրորդ դասարանում առավել տեսանելի է դառնում սովորողների խմբային, համագործակցային աշխատանքը թե՛ դպրոցում, թե՛ դպրոցից դուրս: Այդ աշխատանքները նպաստում են ինչպես իր, այնպես էլ ընկերոջ խոսքը /գրավոր, բանավոր / շտկելուն, այն գրագետ դարձնելուն: Այդ աշխատանքներին առավել նպաստում է կայքը: Կայքը դառնում է խոսքի զարգացման միջավայր, իսկ կայքի սպասարկումը՝ խոսքի զարգացման միջոց: Չորրորդ դասարանցին պիտի կարողանա՝ Տեքստը վերարտադրել համառոտ և

ընդարձակ. Տեքստը վերարտադրել տարբեր դեմքերով (հերոսների, իր, հեղինակի, անտեղյակ կամ լավատեղյակ մեկի... անունից). Տեքստը համառոտել և ընդարձակել. Թվարկել հերոսներին, նկարագրել և բնութագրել նրանց. Ծանոթ տեքստից դուրս գրել կամ տեքստում նշել փոխաբերությունները, անծանոթ բառերը, դարձվածքները, առածները և այլն. Մեկնաբանել, այլ բառով փոխարինել հանդիպած արտահայտությունները, բառերը, բառակապակցություններն ու դարձվածքները. Դարձվածքները փոխարինել համապատասխան արտահայտություններով և հակառակը. Խոսքում գործածել իրեն ծանոթ դարձվածքները, առած-ասացվածքները. Տարբերել առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառերը. Տարբերել նախադասության տեսակները. Ուրիշի ուղղակի խոսքը դարձնել անուղղակի և կետադրել. Ընթերցել և դատողություններ անել ընթերցածի վերաբերյալ. Գնահատական տալ ստեղծագործության հերոսներին, նրանց գործողություններին. Տեքստի հաղորդած տեղեկությունների հիման վրա եզրահանգումներ կատարել.Դիտարկել իրավիճակները տարբեր տեսանկյուններից, արտահայտել վերաբերմունք. Քննարկումներ և վերլուծություններ կատարել իրավիճակի կամ առաջարկված թեմայի շուրջ. Սեփական կարծիքը հիմնավորել՝ բերելով համապատասխան փաստեր. Պատմել իր, այլոց գործունեության մասին.

Եզրակացություն

Այսպիսով, արդյունավետ կազմակերպված մանկավարժական հաղորդակցման գործընթացը հնարավորություն է տալիս մանկավարժական գործունեության ժամանակ ապահովելու իրական հոգեբանական շփում, որը պետք է առաջանա մանկավարժի և երեխաների միջև՝ նրանց վերածելով հաղորդակցման սուբյեկտների, օգնելով հաղթահարել տարաբնույթ հոգեբանական խոչընդոտները, որոնք առաջանում են փոխգործունեության գործընթացում, երեխաներին ուղղորդել համագործակցության՝ դարձնելով մանկավարժական ստեղծագործության սուբյեկտների: Այս դեպքում մանկավարժական հաղորդակցումը բնութագրում է մանկավարժական գործունեության ընդհանուր սոցիալ-մանկավարժական կառուցվածքը:

Այն մանկավարժական գործունեություն է ներմուծվում որպես ներազդման գործիք և սովորական պայմաններն ու հաղորդակցման գործառույթներն այստեղ ստանում են հավելյալ ծանրաբեռնվածություն, քանի որ համամարդկային ասպեկտներից վերափոխվում են մասնագիտական– ստեղծագործական բաղադրիչի:

Ուսուցչի խոսքը վճռական դեր ունի սովորողների խոսքային հաղորդակցման ձևավորման գործում: Խոսքային հաղորդակցումը հարկավոր է իրականացնել ճիշտ ընտրելով խոսքային մեթոդները և դրանք գրագետ կիրառելով: Անառարկելի փաստ է, որ ուսուցչի խոսքը պետք է լինի մատչելի, որքան մատչելի , այնքան դասը հասկանալի, մատչելի, բայց ոչ պարզունակ: Ուսուցչի խոսքը պետք է համեմված լինի մակդիրներով, համեմատություններով, բառակրկնություններով, փոխաբերություններով, շրջասույթներով, բառերի ձևաիմաստային խմբերից ընտրված ճիշտ օրինակներով:

Երեխաների խոսքային կարողությունների ձևավորումը պետք է կապել նրանց խոսքի որոշակի ոճի զարգացման հետ՝ խոսակցական, գիտական, գեղարվեստական և այլն: Խոսքի օրինակելի նմուշներ երեխաները նախ ստանում են ընտանիքում՝ ծնողներից, հարազատներից, ապա դպրոցում՝ ուսուցիչներից և, հատկապես, այն հյութերից , գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք նրանք կարդում են և պատմում:

Օգտագործված գրականության ցանկ

- Վիքիպեդիա https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%AC%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80_%D5%A7%D5%BB
- Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա https://aspu.am/website/images/files/sima%20cragir%20hayoc.pdf
- http://www.mskh.am/sites/default/files/user/77/files/mayreni_1-4.pdf
- Հայկական հանրագիտարան http://www.encyclopedia.am/about.php

- https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-11/f203302debee4a8f417d00aa0af300bc.pdf
- Աբրահամյան Ս. Գ. , Աշակերտի խոսքի զարգացումը, Ե. , Լույս, 1973,
- Ամիրջանյան Ցու. Ա. , Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,